

Ժողովուրդ

96
(2946)

16 հունիսի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՄՏՎԵՐՈՒՄ ՄՆԱՑԱԾ, ԲԱՅՅ ՈՉ ՄՏՎԵՐԱՅԻՆ «ՈՒՂԵԿՑՈՐԴԸ»



Վերջերս ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հաճախ է մարզեր այցելում: «Ժողովուրդ» օրաթերթը այդ այցելությունների մեկնարկից դեռ օրեր առաջ դրանց իրական նպատակների մասին գրել էր. Փաշինյանն իր վարկանիշը բարձրացնելու համար է գնում մարզեր, իրեն մատուցում իբրև հասարակ հասանելի ղեկավար՝ հեռանկարում 2026 թվականի ընտրությունների համար ձայներ հավաքելու հույսերով:

Իսկ ովքեր են նրան ուղեկցում հանդիպումների ժամանակ. բացի տեղական ինքնակառավարման մարմիններից՝ Փաշինյանին մարզերում ողջունում են ՏԿԵ նախարար Գևորգ Սանոսյանը, քաղաքաշինության կոմիտեի ղեկավար Եղիազար Վարդանյանը, գինևորականներ եւ ուժային կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ: Նրանց շարքերում թերևս ստվերում կա եւս մեկը, ով Նիկոլ Փաշինյանի կողքին է գրեթե յուրաքանչյուր այցի ժամանակ: Խոսքը ստվերում մնացած, բայց ոչ ստվերային, «նախկինների» ժամանակներից ղեկավարների կողքին կանգնած Սարգիս Բաղինյանին է վերաբերում:

Իսկ ո՞վ է Սարգիս Բաղինյանը. Նա քաղաքաշինության նախարարության ԾԻԳ-ի նախկին տնօրեն է եղել: Բաղինյանի ներկայացրած պաշտոնական հայտարարագրից տեղեկանում ենք, որ վերջին իշխանությունների օրոք՝ 2021 թվականին նա եղել է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, ապա դադարեցրել է պաշտոնական պարտականությունները 2023 թվականի մարտին: Բաղինյանը, սակայն, շարունակում է Փաշինյանի կողքին մնալ՝ որպես Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը գործունեություն է ծավալում համայնքային ենթակառուցվածքների վերականգնման գործում, այսինքն՝ Փաշինյանի այցերը դարձնելով եւ մանկապարտեզներ Բաղինյանի հետ ուղիղ կապ ունեն, քանի որ, ինչպես ArmLur.am-ը տեղեկացավ, ծրագրերը իրականացվում են այս հիմնադրամի աջակցությամբ:


Սարգիս Սուրիկի Բաղինյանի որդին՝ Սուրեն Սարգիսի Բաղինյանը, համաձայն հայտարարագրի՝ աշխատում է ազգային անվտանգության ծառայությունում՝ որպես քննչական գլխավոր վարչության ավագ քննիչ: Սակայն, հարկ է նշել, որ 2024 թվականի տարեկազմին ՀՀ ԱԾ-ի քննչական գլխավոր վարչության գործառնությունները փոխանցվել են քննչական կոմիտեին: Սարգիս Բաղինյանը հենց որդու գործունակ պատասխանատվության ենթարկել է տուգանել: Այսինքն՝ անվտանգության ծառայության անվտանգության ծառայությունում որպես քննչական գլխավոր վարչության ավագ քննիչ, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագիր:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

«Հայաստանի Հանրապետությունում մամուլը հեղափոխությունից հետո ազատ է առավել, քան երբեք է»։ Իշխանության գալուց մեկ տարի անց՝ 2019 թվականին, լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման հայտարարություն էր արել լրագրող-վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նրա այս հայտարարություններից շուրջ վեց տարի անց, սակայն, իրական պատկերը եւ փաստերը լրիվ այլ բանի մասին են վկայում: «Լրագրողների իշխանություն» համարվող ԹԴ-ի օրոք իշխանության վերահսկողությունից դուրս ՋԼՄ-ների նկատմամբ գրաքննությունը գնալով մեծ թափ է առնում: Իշխանությունները մի կողմից, իրենց իրավունքի ու ազատության պահպանման հռչակած մի շարք ՀՀ-ներ մյուս կողմից, որոնք շատ դեպքերում առնչություն էլ չունեն լրագրության հետ, իրենց պարտք են համարում մեղադրանքի կարգավորման անվան տակ՝ ՋԼՄ-ներին վերահսկելու նոր մեխանիզմներ մշակելու: Հիմա էլ հերթը «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ին է, որի նախագահը «Լուսավոր Հայաստան» կուսակցության ղեկավար, ՀՀ հատուկ հանձնարարություններով նախկին դեսպան Էդմոն Մարուքյանի կինն է՝ Տաթևիկ Մատինյանը՝ մասնագիտությամբ՝ իրավաբան: Երեկ «Լիբերալ քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ն, ՀՈՒՄ-ի հետ համատեղ, «Խթանել թափանցիկ եւ վստահելի մեդիայի զարգացումը Հայաստանում» ծրագրի շրջանակում հանրային քննարկում էր նախաձեռնել, որի ժամանակ էլ «ավելտեցին», որ մտադիր են տեսալսողական մեդիայում տարածվող ատելության խոսքը վերահսկել ու այս նպատակով նոր մեխանիզմներ են մշակում: Հեռուստամամուլի մեդիա (ԹԻՎի լայք) անվան տակ մտադիր են գրաքննել եւ խմբագրել «Յուրաբան», «Ֆեյսբուքում», «Տելեգրամում» եւ սոցցանցերում տարածվող կոնտենտը, չխմբագրվողներին՝ վարչական պատասխանատվության ենթարկել՝ տուգանել: Այսինքն՝ ատելության խոսք տարածող ՋԼՄ-ները, որոնց տվյալները հայտնի են, պատասխանատվության կենթարկվեն: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



Քաղաքական իշխանությունը ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի գիտնական անդամի փնտրուղի մեջ է եւ իր սրտով թեկնածուի չի կարողանում ընտրել. ու թեեւ խորհրդարանը արձակուրդում է, այնուամենայնիվ, փնտրությունները շարունակվում են: Իսկ մինչ այդ ողջ ամառ ԲԴԽ-ն կաշխատի ոչ լիարժեք կազմով, քանի խորհրդարանը արձակուրդի մեջ է ու հանգստից կվերադառնա միայն սեպտեմբերին: Մինչ այդ՝ աթոռը թափուր է: Հիշեցնենք, որ Վիգեն Բոչարյանի՝ ԲԴԽ-ում լիազորություններն ավարտվել են բոլորովին վերջերս՝ հունիսի 25-ին՝ պաշտոնավարման հինգ տարին լրանալու հիմքով: Եվ անցնող 5 տարիներին, քանի որ Վիգեն Բոչարյանը ԲԴԽ-ում պաշտոնավարել է քաղաքական իշխանությանը չհակադրվելու, այլ ծառայություն մատուցելու սկզբունքներով, հիմա առավել մեծ հավակնություններ ունի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ԲԴԽ նախկին անդամ Վիգեն Բոչարյանը՝ Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու է դարձել: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**



Հունիսի 14-ին Եվրոպայի լարված սպասում էր ԵՎՐՈ-2024-ի վերջին՝ Իսպանիա-Անգլիա խաղին: Կիրակի օրը վճռորոշ էր երկու երկրների թիմերի համար եւ այդ օրերին՝ հունիսի 14-15-ը, ՀՀ Կառավարությունը, վարչապետի գլխավորությամբ, որոշեց մենակ չթողնել Եվրոպացիներին: Հենց նույն օրը աշխատանքային այցով Գերմանիայի Դաշնությունում էր Հայաստանի կառավարության պատվիրակությունը՝ Նիկոլ Փաշինյանը իր տիկնոջ՝ Աննա Հակոբյանի հետ, ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության պետ Գագիկ Վանոյանը, ով մեկ օր ավելի պետք է մնար՝ հունիսի 14-16-ը եւ ՀՀ վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության լուսանկարիչը. համաձայն վարչապետի որոշման՝ Նիկոլ Փաշինյանին, Արայիկ Հարությունյանին եւ Տիգրան Մեհրաբյանին: Ինչպես նաեւ հայտնի դարձավ, որ ներկայացուցչական, փոխադրամիջոցների վարձակալման եւ հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերի համար նախատեսված միջոցների հաշվին, իսկ Գագիկ Վանոյանին՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության պետական արարողակարգի ծառայության միջոցների հաշվին: Ստացվում է, որ ՀՀ իշխանությունները աշխարհում տեղի ունեցող ուշագրավ սպորտային իրադարձություններին մասնակցելու հեշտ եւ հարմար եղանակ են գտել՝ պաշտոնական այց դեպի այդ երկիր՝ պետական բյուջեի հաշվին:



«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈ» 1924-2022

ԿԱՅԱՑԱՎ ԵՐԿԼԵԶՈՒ ԿԱՏԱԼՈԳԻ ԸՆՈՐՀԱՆՒԻԵՍԸ

«Հայկական կինո» 1924-2022 երկնագույն կայքագրի շնորհիվ կայացավ երեսնամյա «Ոսկե ծիրան» 21-րդ միջազգային կինոփառատոնի քաղաքականության համաժողովը: Ներկա հրատարակությունը մի փորձ է սալ հայ կինոյի 100-ամյա արտադրանքի լիակատար դասակարգման գրքի՝ ընդգրկելով Հայաստանում կամ Հայաստանի հետ համատեղ արտադրված խաղաղկային, վավերագրական եւ անիմացիոն ֆիլմերի վերաբերյալ հնարավորին չափ աղյաժիչ տեղեկատվություն: Պե՛տ է ստել, որ նման առաջին փորձ արվել է 60-ականների սկզբին հայ կինոյի հիմնադիրներից մեկի՝ Գաբրիել Գաբունու կողմից: Այն սարժերին նա կազմել էր նախորդ 35 տարվա արտադրանքի հիմնականում հավաստի ֆիլմագրանկը, ինչպես նաև հայ կինոյի վերաբերող գրքերի եւ հոդվածների մասնագիտությունը:



Ֆիլմերը խմբավորված են ըստ տեսակների (խաղաղկային, վավերագրական, անիմացիոն), ըստ արտադրության տարիների՝ այբբենական կարգով: Կատալոգը բովանդակում է ֆիլմերի հետեւյալ տվյալները. անվանումը, արտադրող ստուդիան, տեսակը (նշված է բաժնի խորագրում), ժանրը (եթե նշվել է արտադրողի կողմից), տեղությունը՝ ըստ վայրերի, մետրաժը (ժամանակահատվածի ֆիլմերի դեպքում) եւ մի շարք այլ տեխնիկական տեղեկություններ, ինչպես նաև նկարահանող խմբի կազմը, դերասանների ու նրանց մարմնավորած դերերի անունները եւ համառոտ ծանոթագրությունը բովանդակության մասին (անտատացիան):

Կատալոգն ունի նաև ֆիլմերի անվանումների այբբենական ցանկ:

Նախորդ երկու հրատարակության նախաբանի հեղինակն էր պրոֆեսոր Սուրեն Հասմիկյանը: Ի հիշատակ եւ ի հարգանք

հայ կինոյում մեծ վաստակ ունեցած կինոգետի՝ կազմողները որոշեցին վերահրատարակել Սուրեն Հասմիկյանի նախաբանը, որում հայկական կինոյի ուղին, զարգացման հիմնական փուլերն իմաստավորելու փորձ է արված: Շեշտը դրված է հիմնական միտումների եւ գործընթացների օրինաչափությունների վրա, ուստի նշված են սակավ ազգանուններ, մանավանդ, որ բուն կատալոգում նախաձեռնողները ձգտել են ոչ մի անուն մոռացության չմատնել:

«Հայկական կինո 1924-2022» լրամշակված երկնագույն կատալոգի հրատարակումն իրականացվել է Հայաստանի կինոգետների եւ կինոլրագրողների ասոցիացիայի կողմից՝ «Հայ կինո - 100» հոբելյանական միջոցառումների շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ:

ՀՈՐԻ ԲԱՂՂԱՍՏՈՅՍ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՈՒԺ՝ «ՆՈԱ»

ԱԿՈՒՄԲՈՒՄ

Հոլանդացի կիսապաշտպանը հանդես է եկել «Հերենվեկտի» մինչև 19 տարեկանների թիմում, «Ռեն Բոսխուս», Սլովակիայի «Տրենչինում», ռուսական Վոլգոգրադի «Ռոտորում», Թբիլիսիի «Լոկոմոտիվում» ու «Ղինամոյում»: Վրաստանի բարձրագույն լիգայում մեր թիմի նորեկն անցկացրել է 81 խաղ ու դարձել 31 գոլի հեղինակ: 26-ամյա կիսապաշտպանը «Նոա» է տեղափոխվել Հասպենի «Բեր Շեվայից», որի կազմում անցկացրած 27 խաղում դարձել է 3 գոլի հեղինակ:

«Նոր հորիզոններ, բայց նույն վճարականությամբ: Պատրաստ եմ պատմություն կերտել եւ տուն բերել հաղթանակը»,-թիմին միանալուց հետո ասել է Իմրան Օսլար՝ Օմարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԲԱՐՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԱԳՐԲԵՋԱՆԻՆ

Բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի մինչև 16 տարեկանների տղամարդկանց պայքարում Հայաստանի հավաքականը հաղթել է ադրբեջանական խմբին՝ դուրս մղելով մեդալների համար պայքարից եւ զբաղեցրել 3-րդ հորիզոնականը:

Հայաստանի հավաքականը ավարտել է ելույթները Եվրոպայի առաջնության C դիվիզիոնում բրոնզե մեդալով: Խաղն ավարտվել է 71-63՝ հօգուտ հայ մարզիկների:

Հայաստանի կանանց Մ16 տարեկանների հավաքականը եւս ավարտել է ելույթները Եվրոպայի առաջնության C դիվիզիոնում: Վերջին խաղում Հայաստանի հավաքականը 77:71 հաշվով հաղթել է Վրաստանի հավաքականին՝ զբաղեցնելով առաջնության 5-րդ հորիզոնականը:

ՆՎԱՃԵԼ Է ԳԱՎԱԹԸ

Ֆուտբոլի Արգենտինայի ազգային հավաքականը 16-րդ անգամ նվաճել է Ամերիկայի գավաթը:

ԱՄՆ-ում կայացած մրցաշարի եզրափակում աշխարհի գործող չեմպիոնը լրացուցիչ ժամանակում 1-0 հաշվով հաղթել է Կոլումբիայի հավաքականին, որը չէր պարտվել նախորդ 28 խաղում: Հաղթական ու գոլը 112-րդ ռոպեին խփել է փոխարինման մտած Լաուտարո Մարտինեսը: Միլանի «Ինտերի» 26-ամյա հարձակվորը 5 գոլով դարձել է մրցաշարի լավագույն ռմբարկու:

Հանդիպման 66-րդ ռոպեին վնասվածք է ստացել եւ արտասվելով փոխարինվել է արգենտինացիների ավագ Լիոնել Մեսսին: 37-ամյա ֆուտբոլիստը, ամենայն հավանականությամբ, վերջին հանդիպումն էր անցկացնում Ամերիկայի գավաթի խաղադաշտում:

Լիոնել Մեսսին կարիերայի ընթացքում նվաճեց 45-րդ գավաթը: 37-ամյա հարձակվորը շարունակում է մնալ պատմության ամենատիտղոսակիր ֆուտբոլիստը:

ԿԱՐԵՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԵՎԱՏՅԱՆ ԱԳՐԲԵՋԱՆ ԶՈՐԻՆՎԱԾ ԵԶՐՈՒՅԹԸ»

ՀՀ զինությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «Արբեջանի 2014թ. ազգային ասլախի «դասնական» ֆաբրեզների ցուցումը եւ «Արեւմտյան Արբեջան» հորինված եզրույթը՝ երկնագույն գրքի շնորհիվ, որը հեղինակել է հայացի աշխարհագրագետ, ֆաբրեզագետ-ֆաբրեզաբան Ռուբեն Գալսյանը: Գիրքը հրատարակվել է «Վեդարդ» գիտակրթամթակալ հիմնադրամի եւ ՀՀ ԳԱՍ Պատմության ինստիտուտի հետ համագործակցությամբ:

Շնորհանդեսին մասնակցեցին գիտակրթական եւ պետական ոլորտի ներկայացուցիչներ: Մասնակիցներին ողջունեց «Վեդարդ» գիտակրթամթակալ հիմնադրամի տնօրեն Ռուբերտ Ղազարյանը: «Այսօր ունենք սեղանին դրված մի կարեւոր աշխատություն: Արբեջանական կեղծարարությունների դեմ պայքարելու ուղղությամբ մեր հիմնադրամի, ակադեմիական ինստիտուտների, առանձին գիտնա-

կանների կողմից տարաբնույթ աշխատանքներ տարվում են, եւ այս գրքի հրատարակությունը կլրացնի դրանք», - ասաց Ռուբերտ Ղազարյանը:

ՀՀ ԳԱՍ Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը, ով նաև գրքի խմբագիրն է, նշեց, թե ինչպես առաջացավ այս գիրքը գրելու գաղափարը: «2014 թվականին՝ Արբեջանի պետական ատլասի հրատարակումից հետո, գտանք դրա բնօրինակը եւ փոխանցեցինք պարոն Գալսյանին: Նա անմիջապես արձագանքեց, եւ առաջացավ այս աշխատանքը գրելու գաղափարը: Նաև առաջարկեց, որ պետք է բացահայտել այսպես կոչված «Արեւմտյան Արբեջան» կեղծիքը: Ես շնորհակալ եմ պարոն Գալսյանին այս վիթխարի աշխատանքի համար», - ասաց Աշոտ Մելքոնյանը:

Գրքի հեղինակ Ռուբեն Գալսյանը նշեց. «Գիրքը փաստագրական է, եւ եթե իմ գործընկերները շարունակեն անել նման գործեր, ես շատ ուրախ կլինեմ»:

Գրքի առաջին մասը վերաբերում է Արբեջանում 2014թ. ազգային ատլասում օտար քարտեզագետների կողմից կեղծված քարտեզների քննարկմանը: «Ազգային ատլասում կեղծել են բնագիր քարտեզներ՝ հունահռոմեական, Եվրոպական, բոլոր քարտեզներից հանել են Հայաստան անունը: Գրքի մի մասը հատկացրել են Արբեջանը հնագույն քարտեզներում ներկայացնելուն: Սակայն Արբեջանը որպես երկիր հնագույն քարտեզներում գոյություն չուներ, նա եղել է Պարսկաստանի նահանգներից մեկը», - ասաց Ռուբեն Գալսյանը:

Գրքի մյուս մասը նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքը որպես «Արեւմտյան Արբեջան» ներկայացնող ադրբեջանական կեղծարարության բացահայտմանը: «Մեր երկրի վրա Արբեջան անունն են դնում: Այս հարցով միջազգային դատարան կարող ենք դիմել», - նշեց հեղինակը:

● Հուլիսի 14-ին՝ ժամը 19:00-ին, Երևանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Ինչ տարբերություն, թե ում հետ» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:



ՀԱՇՎԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ ինչ արճնություններ ունեն հաճախողները: Սիրան Պողոսյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝

- ընդգրկված են բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում: 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն օգտվել անվճար դեղեր ձեռք բերելու արտոնություներից, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50% զեղչով, եթե չեն օգտվում ավելի արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքից,
● ընդունելության քննությունները դրական գնահատականներով հանձնած 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք ընդունվում են պետական բարձրագույն կամ միջնակարգ-մասնագիտական ուսումնական հաստատությունների անվճար համակարգ՝ վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում,
● 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար էլեկտրատրանսպորտից օգտվելու իրավունք,
● իրավունք ունեն ստանալու աջակցող միջոցներ՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ՝ համապատասխան վերականգնողական անհատական ծրագրին, պետական հավաստագրի հիման վրա:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՎՈՒՐԳ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչև 18 տարին լրանալը և անժամկետ:

ՀԱՍԱՐՎՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ չափանիշներ են հաճախ առնվում վարկ սրամատրեյիս: Արդյո՞ք այդ չափանիշների առկայության դեպքում բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը դառնալով՝ է դիմողի հետ կնքել վարկային դայնամագիր: Համլետ Հարությունյան (46 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ վարկային պայմանագիրը չի հանդիսանում հրապարակային պայմանագիր, հետևաբար վարկատուն ինքն է ազատորեն որոշում ում հետ կնքել վարկային պայմանագիր, ում հետ՝ ոչ: Բանկը կամ այլ վարկային կազմակերպություն, գնահատելով վարկը մարելու հաճախորդի հնարավորությունը, ինքն է որոշում կնքել վարկային պայմանագիր, թե ոչ:

Վարկունակությունը գնահատելու նպատակով կարող են հաշվի առնվել հետևյալ հանգամանքները՝ աշխատավարձի և այլ եկամուտների առկայությունը, վարկային պատմությունը, անշարժ և այլ գույքի առկայությունը, երաշխավորների առկայությունը, տարիքը, այլ հանգամանքներ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՎՈՒՐԳ». Վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային գեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային գեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է («Վարկային տեղեկատվության շրջանառության ել վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետ):

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Արգենտինայի ֆուտբոլի ազգային թիմի և ամերիկյան «Մայամի-Ինտեր»-ի հարձակվող Լիոնել Մեսին բոլոր ժամանակների ամենատիտղոսակիր ֆուտբոլիստն է: Նա պրոֆեսիոնալ կարիերայում նվաճեց 45-րդ տիտղոսը՝ դառնալով պատմության ամենատիտղոսակիր ֆուտբոլիստ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and contact information. Includes a logo and contact details for the newspaper.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




Table with 2 columns: Region and Temperature range. Lists regions like Yerevan, Gyumri, Vanadzor, etc., and their corresponding temperature ranges.

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 15.7.2024

Գլխավոր խմբագիր՝ ԶՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: